

GRAMMAIRE**PRONOMS ET ADJECTIFS DEFINIS – ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ ՈՒ ԱԾԱԿԱՆՆԵՐ**

Ils indiquent des personnes ou des objets définis, pris dans leur totalité ou séparément.

Ce sont : բոլոր(ը), ամենքը, ամեն ինչ, ամբողջ, ողջ, ամեն, ամեն մեկը, ամեն մի, յուրաքանչյուր(ը). Les pronoms définis se déclinent selon la déclinaison en - ի.

Exemples : Բոլորը գիտեն նրա անունը: Ես տեսնում եմ ամեն ինչ:

PRONOMS ET ADJECTIFS INDEFINIS – ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ ՈՒ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Ils indiquent des personnes ou des objets indéfinis, ainsi qu'une qualité ou une quantité indéfinie.

Ce sont : մեկը, մի, մի բան, մի քանի, (մի) ուրիշ, այլ, որոշ, ոմն, ինչ-որ, այսինչ, որևէ, մեկնումեկը (որևէ մեկը). Les pronoms indéfinis se déclinent selon la déclinaison en - ի.

Exemples : Նա մի քանի նամակ գրեց: Որևէ բանալի կարող է այս դուռը բացել:

Այստեղ ինչ-որ տարօրինակ բան կա: Ինչ-որ մեկն ուզում է ձեզ տեսնել:

PRONOMS ET ADJECTIFS NEGATIFS – ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ ՈՒ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Ce sont : ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ (ոչ մի բան), ոչ մի. Les pronoms négatifs se déclinent selon la déclinaison en - ի et peuvent être sujet, attribut ou complément ; ils n'ont pas de pluriel.

Exemples : Ես ոչինչ (ոչ մի բան) չեմ հասկանում: Ոչ ոք (ոչ մեկը) չի ուզում գնալ տուն:

PROVERBES ET DICTONS ARMENIENS – ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՇՆԵՐ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

- Ասա՛ ով է ընկերդ, ասեմ ով ես դու:

- Ինչ աղբյուրից որ ջուր ես խմում, էն աղբյուրին քար մի՛ գցիր:

- Լավ է աչքով կույր լինել, քան մտքով:

- Կնոջ շինած տունը Աստված էլ չի քանդի: Աստծու շինած տունը կինը կքանդի:

- Կույրի ի՞նչ պետքն է, թե մումը թանկ է:

- Մեկ խոսի՛ր, տասը լսի՛ր:

- Հագուստի նորն է լավ, ընկերոջ՝ հինը:

- Էշն ի՞նչ գիտի, թե նուշն ինչ է:

- Սև հավն էլ է սպիտակ ձու ածում:

- Մի ձեռքը ծափ չի տա:

- Մեկն ուտելով է մեռնում, մեկը՝ նայելով:

- Գիշեր չի եղել, որ չի լուսացել:

EXERCICES**I. Complétez avec des pronoms ou adjectifs définis, indéfinis ou négatifs :**

- Երեխան չի վախենում: Երբ նա ընկավ ծառից, մենք չլսեցինք:
- Ես տեսա երեխաներ, որոնք ուզում էին բան գրել պատի վրա:
- գիտեն, որ Արամը կարող է մեքենա վերանորոգել:

II. Traduisez les phrases suivantes :

- Elle a trois enfants et veut faire un cadeau à chacun.
- Je vois quelque chose dans votre poche. Il n'y a rien dans ma poche. (poche = գրպան)
- Quelqu'un frappe à la porte. Mais il n'y a personne dans cette chambre. (frapper à la porte = դուռը ծեծել)
- Je sais quelques mots en italien. Elle a vingt élèves qui travaillent tous très bien.
- Tu n'aimes rien. Il n'aime personne. Elle aime quelqu'un, mais je ne sais pas qui.
- Je n'ai pas aimé ce livre. Je veux prendre un autre livre.